



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՃԱՌ-ԱԳԱՅԻՐ

1914

2 ԳՐԳ.

Երևան

Գ  
3



891.99-82

N 1400

# Ճ Ա Ռ Ա Գ Ա Յ Թ

Գրական գեղարվեստական  
և քննադատական ժողովածու

II Գ Ի Ք Ո Յ Ն

ԵՐԵՒԱՆ

Տպարան «ԼՈՅՍ» Արշակ Յակոբեանցի.  
1914

2013

891.99-82  
ժ. 32

Բնականորակութիւն

Ճակատագրի հարւածը.	Միտակ Յոհաննիսեան
Աղբիւր (բանաստ.)	Հմայակ Նազարեան
* * (բանաստ.)	օր. Յասիկ
Այնպէս չէ... ասան...	Դ, Սարգսեան
Ձկնորսը.	Երւանդ Տէր Գրիգորեան
Աշնան երգերից. (բանաստ.)	Օր. Լուսիկ Վիրաբեան
Երջանկութեան ժամեր	Աղաջան
* (բանաստ.)	Հայկ Արզումանեան
* * (բանաստ.)	Լիւսն
* * (բանաստ.)	Աղաջան
* (բանաստ.)	Հայկ Աղաջանեան
* * (բանաստ.)	Հմայակ Նազարեան
* (բանաստ.)	Բուրաղղաղէ
* * (բանաստ.)	Միտակ Յովհաննիսեան
Պանդր.	Խ. Աղամորդի
Դու իմ սիրելիս (բան.)	Ե. Փամհարեան
Գրախօսական.	
Պոստ-արկղ.	
Յայտարարութիւններ	


891.99-82

Δ - 32

N 1400


u.u.

# Ճ Ա Ռ Ե Գ Ե Յ Թ



Գրական գեղարվեստական  
Եւ քննադատական ժողովածու

1009  
6652



ԵՐԵՎԱՆ

Տպարան «ԼՈՅՍ» Արշակ Յակոբեանցի.

1914

( 2925 )

# THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO  
CHICAGO, ILLINOIS

THE UNIVERSITY OF CHICAGO  
CHICAGO, ILLINOIS

THE UNIVERSITY OF CHICAGO  
CHICAGO, ILLINOIS

THE UNIVERSITY OF CHICAGO  
CHICAGO, ILLINOIS

THE UNIVERSITY OF CHICAGO  
CHICAGO, ILLINOIS



## ՃԱԿԱՏԱԳՐԻ ՀԱՐԻԱԾԸ

Աշնանային քամին փչում էր անեղ ոռնոցով: Թափում էին ծաղիկները, ընկել էին տերևները, և ամեն ինչ մահուան սոսափով բռնւած, տարուբերում էր քամու հոսանքների առջև:

Հսկտեմբերեան ուշ գիշեր էր: Անհրնդահատ ոռնացող քամին պարզ և որոշակի աւետում էր ձմրան գալուտը: Ճանապարհներում երթևեկութիւնը դադարել էր. ուղտերի անվերջ քարաւանն էր, որ խուլ դողանջիւնով առաջ էր ընթանում:

Մենակ էր կեանքի մեծ ճանապարհին մի ջահէլ դարուն պատանի. հնամաշ ցնցոտիներով, նիհար դէմքով ու կնճոռտ հայացքով: Ընտամիքը, կեանքը, օր-աւուր անող առհելի կարիքները նրան ընկճել էին, ու ճակտի վրայ մռայլ կնճիռներ թողել: Կեանքի մեծ ճանապարհը միշտ էլ երկար է պանտուխտի համար, ցաւոտ, արցունքոտ անհուն ու անեզր...

Իրիկնադէմ էր: Երիտասարդը կանգնեց Ն. խաղաքի մօտ: Մարել էին բոլոր ճրագները՝ ամեն ինչ նիհում էր: Գրգռն— այսպէս էր նրա սնունը— անդհրնդահատ բախում էր պատահած դռները, տպաստան խնդրելու, ցեխոտւած, կեղտոճա. ո՞վ էր նրան ներս հրաւիրողը... ու նա անց կացրեց դուրսը՝ ցրտի տակ...

Առաւօտը լուսացաւ. Գրգռն սպասում էր մի խանութի բացւելուն:

Նա դարձեալ պիտի պատահէր նախկին աղային:

Նախանցեալ տարի Գրգռն աշխատում էր նրա տանը և ամենայն հաւատարմութեամբ արթուն հսկում էր, թէ մի գուցէ տունը մարդ կ'մտնի, կկողոպտի, ու ինքը աղայի կասկածին կենթարկւի...

Երբեմն ընտանիքի ծանր յիշողութիւնների տակ նա

հնչում էր, և անկախ իր կամքի, քնում մտորող ցնորքներով:

Մի օր էլ երբ անուշ քնի մէջ — երազում փայփայում էր բալաներին, մէկը ամուր խփեց նրա գլխին: Աղան էր: Գրգօն վեր թռաւ. պատահարը անսպասելի էր. գողացել էն աղանի Բաշ նժոյգը որ իրաւ Գրգօի հետ չէր փոխիլ: Այնուամենայնիւ Գրգօն գրկրելու էր իր երկար տարիների սպասուող ոտճիկից: Շատ էր խնդրել էլ յոյս չկար. ու Գրգօն անէծքը շրթունքրերին հեռացել էր աղայից:

Եւ ահա նա նորից եկել էր խնդրելու իր հալալ աշխատանքը: Կատանայ... ահա այդ էր երազում ընտանիքի վերջին յոյսը...

— Ձէ, չէ պիտի նորից գնալ, պիտի խնդրել. աշխատել եմ աշխատել, քրտինք եմ թափել. պիտի էլի խնդրել չտւեց՝ գանգատւել, բողոքել: Մարդ մարդու հալալ քրտինքով աշխատած փողը չտամ... չտայ... գանգատ կգնամ:

Մինչդեռ Գրգօն ինքն իրան խօսում էր, խփեց ժամի Զ-ը իրանութը բացւեց. դռան շէմքին երևաց խազէինը. հաստափոր, կոկ հագնւած, իսկ կրծքի վերայ փալլում էր ժամացոյցի երկար, ոսկեգոյն շղթան:

Աղան փողս տո՛ւր...

— Էլի... խազէինը շուռ եկաւ - էլի դու, շուն շան որդի պիտի զահլէս տանես թէ՞ ապտակի համար երեսդ քոր է գալիս...

— Աղան, իմ աշխատանքս եմ ուզում, քեզնից ողորմութիւն չեմ ուզում: Ախր աշխատել եմ աշխատել. չես տալ կամարսես համ անսպասիժ կմնաս համ...

— Լռիր ասում եմ սատանի որդի, հեռացիր գլխիցս թէ չէ...

Գրգօն լուռ դւ մոռնջ աչքերը գետին յառեց: Այդ

այդ ժամին մէկը կամացուկ բռնեց նրա թևից.

— Արի ախպէր, արի գնանք ես էլ քեզ նման անօգնական դարիպ եմ. արի, մեր կեանքը թանգ է ու սրանց ձեռքին խաղալիք... արի, թէ սիրում ես կեանքդ:

Գրգօն շուռ եկաւ, նայեց անծանօթին և անորոշ ժպտաց:

— Հա՛, ախպէր, իմ կեանքս թանգ է միայն իմ բալիկներին համար. սխ, թէ նրանք չլինէին, կսպանէի սրան կամ կսպանուէի. այդ ինձ փոյթ չէր թէ կեանքս առանց կանաչելու պիտի չորանար... չէ՛ չէ՛, ես ընտանիք ունեմ, մի տուն լիքը մանուկներ, ու դրանց միակ յոյսը ես եմ:

— Դէ՛, գնանք. ես էլ քեզ պէս տանջւած եմ. տո՛ւր ինձ ձեռքդ:

Երկուսի արցունքներն էլ ցոլեցին:

— Գնանք, գնանք, չե՛ս զգում արեան հոտը. գնանք, գնանք...

— Արիւն, արիւն, ուհ...

— Գնանք, շնչաց Գրգօն:

Վշտի ուղեկիցը առաջ ընկաւ. Գրգօն քայլում էր նրա յետևից անորոշ:

— Ո՛ւր ենք գնում հարցրից Գրգօն:

— Հետևիր ինձ.

Անծանօթը բռնեց նրա թևից կանգնեց մի գինետան առաջ, և ներս քաշեց:

Գրգօն չհասկացաւ թէ որտեղ է ինքը կամ ինչ էր լինելու. վիշտը նրա աչքերի մէջ մթութեան ցուր էր դրել:

— Գինի՞ բեր, գոռաց անծանօթը միկիտանչուն. գաւաթները մէկը միւսի յետևից դատարկեցին:

Գրգօն գլուխը բարձրացրեց և կամացուկ մոմոաց.

— Ո՛րտեղ ենք մենք...

Գինետան մէջ, աչքերդ բաց արա մի քիչ խմենք:  
Գրգօն գլուխը բարցրացրեց, աչքերը սևեռեց ան-  
ծանօթի վրայ, ու մի սառսուռ զգաց. գինետո՛ւն, լա-  
ցող մանուկներ, տանջւած սիրտ, ու գինի՞... ու յու-  
սահատ մի շարժում արեց վեր կենալու:

— Նստիր, խմիր թող մեր ցաւերը մեղմանայ, խմիր  
ի սէր քո սոված բալաների...

— Օ՛հ, սիրտս, սիրտս այրում է...

Խմիր խմիր, թող էրւած սիրտդ հանգստանայ: Խմիր  
տես, ես էլ խմում եմ իմ ցաւերը մեղմացնելու:

Գրգօն բնազդաբար վերցրեց բաժակը, մօտեցրեց շըր-  
թունքներին, և ապա ցաւագինօրէն արտասանեց.

— Ե՛ս, ե՛ս չեմ խմի այս թոյնի բաժակը...

— Խմիր, դա թոյն չէ այլ ցաւի սիւսփիչ. մոռացման  
սուր ամեն ինչ աշխարհը ցաւ է ու տանջանք. խմիր..

— Չեմ կարող չէ չեմ կարող թող ես գնամ. իմ ցաւի  
գինով չի բուժւի, իմ սիրտը գինով չի հովանայ...

Ու նա սոսկալի ցաւի տակ օրօրւելով դուրս եկաւ  
գինետո՛ւից, և քայլերը ուղղեց դէպի աղան: Անծաւօթը  
հետևեց նրան, ապա կանգ առաւ ու կոկորդով մին  
բղաւեց:

— Աանգնիր, ախպէր կանգնիր. արի՛նը, արի՛ւնը...

Գրգօն նրան շլտեց ու լուռ, մտախոհ առաջ անցաւ  
նա կանգնած էր աղայի դռանը

— Տուր, տուր իմ վարձը. տուր երեխաներիս օգնու-  
թիւն համսեմ. տուր...

— Էլի՞... ես քեզ ասացի մի քոռ կոպէկ չեմ տալ:

— Տուր չես մարսի. աղաչում եմ վերևը Աստուած կա  
կլսի. մեղք եմ ինչքան քեզ համար աշխատել եմ փեշ-  
քաշ թող ըլի քեզ. ուրիշից ստացածներս տուր գոնէ:

— Ես քեզ ասացի հեռացիր մի կողմէ կ տուողը չեմ. գնա որտեղ կուզես, բողոքիր, գանգատիր ինչ կուզես արա, ես քեզ փող տողը չեմ, թող երեխաներդ կտորուեն դու էլ հեաը, իմ փոյթը չէ.

Գրգոն մեխւածի նման մնաց տեղում կանգնած. յետևից մէկը բռնեց նրա թևից:

— Արի, արի ես քեզ փող տամ գնա երեխաներիդ պահի.

Գրգոն յիտ նայեց. դիմացը կանգնած էր մի պարոն բարի դէմքով: Իէպէտ սկզբից նա լաւ տեղիակ էր թէ ո՞վ էր մեղաւորը, նա գիտէր որ Գրգոն ոչ մի բանում մեղաւոր չէ, գիտէր նաև որ աղան նրան փող տուողը չէ, միայն հակաւոր էր մի կերպ հեռացնել անդուծ աղայից այդ կարօտեալ պանտոխտին՝ մի հին թղթադրամ դրեց նրա ձեռքում ասելով. —

— Առ էս փողը, գնա երեխաներիդ մօտ, էլի կգաս ինձ մօտ կաշխատես, էլի փող կտամ...

— Իսկ իմ աշխատաիքը, իմ ամբողջ 10 տարւայ թափած քրտինքը, պարտքը, խարջը մտրակը...

Գնա, գնա, էլի՛ կգաս փող կտամ պարտքդ էլ կտաս խարջդ էլ. ու պարոնը բռնեց Գրգոյի թևից, հեռացրեց պարտապան աղայից, և գրգոն թղթադրամը ամուր բռնած իր ամուտ, քայլում էր անյոյս անմխիթմբ...

Մենակ էր նա. միայն նախկին անձանօթն էր, որ քայլում էր նրա յետևից գաղտագողի. նա նկատել էր որ պարոնը իրան փող տուեց, ու այն կիսելու էր անպատճառ: Ի՞նչ անէր թողած իր մտերիմներին, թողած քաղցր հայրենիք, եկել էր քաղաք բախտ որոնելու, սակայն շնորհիւ «ընկերներին» խրախուսանքին «խմիր հա՛ խմիր» այլևս չէր կարող չխմել կարմիր գինին և «հոգի տուող» արաղը: Միկիտանչին նրան «դաւերիայ» էր անում. «Չահէլ տղա է, կաշխատի՛ կտայ»:

Բայց երբ...

Ում դիմել, աշխատանք էր խնդրել, մերժել էին ու դուրս վաճառել, որովհետև նա հարբեցող էր, ու գործի անընդունակ:

Ոչ մի ճար չկար, պիտի գողանալ, այդ էր ասում նրան իր ներքին ձայնը:

Ու այդ մտորումներով նա հետապնդում էր Գրգօին:

Դէպի տո՛ւն, դէպի տո՛ւն. մի ձայն էր կանչում նրան: Ու Գրգօն անհաստատ քայլերով առաջ էր շտապում...

Իրիկնադէմ էր. մտրել էին լոյսի բոլոր ցուլքերը, ու մութը ամենի վիշտալի նման սկսեց թաւալիլ երկրի վրայ: Գրգօն նայում էր քաղաքի շինութիւններին, և մըմնջում. «էրնէկ նրանց, որ տաքուկ արկողիններում փայփայում են իրանց քալիկներին...» անխ գոնէ ես տեսնէի իմ քալաներիս...

Քայլիլ անկարող էր այդ մութ դիշերին. պիտի հանգստանար, և նա մտաւ պատահած հիւրանոցը. նստած էին հազարաւոր մարդիք, ուտում էին խմում, ու կուշտ-կուշտ ծիծաղում: Գրգօն էլ նստեց մի անկիւնում. ախորժակ չուէր. վիշտն ու ցաւը նրան մեքենայ էին դարձրել ու լուռ ու խորհրդաւոր նայում էր անծանօթներին:

Կատաց-կամաց նինջը նրան յաղթեց. քնել էր ուզում թէկուզ յաւիտեան, անվերջ քնել...

Սեռանձնացան տւիւն, և նա առանձնացաւ իր վշտերի հետ խորելու... Ինքը ննջում էր, իսկ դարդը, ցաւը սրտում ալեկոծւում...

Դուրսը ոռնում էր աշնան քամին ու լուսամուտը ծեծում. քամու հետ լսում էր մեղմ լացի, և հառաչանքի ձայներ կարծես բնութիւնը լալիս էր՝ ու ամենքը

११ ११ ४

Handwritten text in a script, possibly Devanagari, appearing as bleed-through from the reverse side of the page. The text is arranged in approximately 15 lines, though it is significantly faded and difficult to decipher.

Handwritten text in a script, possibly Devanagari, appearing as bleed-through from the reverse side of the page. The text is arranged in approximately 10 lines, though it is significantly faded and difficult to decipher.





114

Տ Ն Ս Ա Ի

Գ Ա Յ Թ

ադատական արմանախի II գրքուհի.  
 Ճակատագրի հարւածը—Միսակ  
 նաստ.) Համայակ նազարեան. 3.  
 4. 5. 6. 7. Սարգսեան. 8.  
 9. Աշնան երգերից (բան.) Օր. 10.  
 11. 12. 13. 14. 15. 16. 17. 18. 19. 20.  
 21. 22. 23. 24. 25. 26. 27. 28. 29. 30.  
 31. 32. 33. 34. 35. 36. 37. 38. 39. 40.  
 41. 42. 43. 44. 45. 46. 47. 48. 49. 50.  
 51. 52. 53. 54. 55. 56. 57. 58. 59. 60.  
 61. 62. 63. 64. 65. 66. 67. 68. 69. 70.  
 71. 72. 73. 74. 75. 76. 77. 78. 79. 80.  
 81. 82. 83. 84. 85. 86. 87. 88. 89. 90.  
 91. 92. 93. 94. 95. 96. 97. 98. 99. 100.

ար հրաւիրում ենք աշխատակցելու  
 թեր ուղարկել. Эривань ред.  
 19

Handwritten text at the top right of the page.

Handwritten text in the middle section, possibly a title or header.

Main body of handwritten text, appearing to be a list or series of entries.

Handwritten text at the bottom of the page, possibly a signature or date.

Small handwritten text at the bottom right corner.

խօսքը մէկ արած, իրար պատմում էին իրանց վիշտն՝  
 իսկ Գրգօն գլուխը քաշ գցած երգում էր իր սիրած  
 երգը.

«Սեղճ աղքատը դառը դատի  
 Դատարկ նստի հէյ աշխարհ,  
 էլ ինչո՞ւ ես քարը թողնում  
 Բարի վրայ, քար աշխարհ...»

Դուռը մեղմ ճռռաց. ներս մտաւ նախկին անձանօթը

— Բարի երեկոյ աղբէր, դու դեռ էլի լալիս ես.

— Աստծոյ բարին: հա լալիս եմ. տես, քամին էլ է  
 լալիս...

— Գրգօ, դու ի՞նչու ես լալիս. դու էլ հօ ինձ նման  
 բախտի խորթ զաւակը չե՞ս... դու փող ունես. երե-  
 խէքդ կապրեն. իսկ ե՞ս...

Միկիտանչին գանգատ գնաց փող է պահանջում. հիմա  
 կգան ինձ բերդ կտանեն, կշղթայեն, կգերեն... Բայց  
 չէ՞ որ ես սիրում եմ ազատութիւնը, սիրում եմ պայ-  
 ծառ լոյսը... Օհ, ո՛չ, ես սիրում եմ կեանքը, ես սի-  
 րում եմ ազատութիւնը... Ես ապրել եմ ուզում, պիտի  
 ապրե՛լ... Ահա նրանք կգան... կտանեն, կշղթայեն...

Ախպէր, մի ճար...

Գրգօն լուռ էր:

Անձանօթի աչքերը վառւում էին կատաղութեամբ:  
 Ձէ, պիտի մի ճար գտնել ինչ գնով էլ լինի:

Գրգօն դարձեալ լուռ էր:

— Ախպէր փող ո՞ւնիս՝ վճռականապէս աչքերը Գրգօյի  
 վրայ յառեց անձանօթը:

— Վա՛խ փող...

Անձանօթի գլխում սոսկալի ծրագիրներ էր կուտաւ  
 կւած. նա մերթ գունատւում էր, մերթ գլուխը կախ  
 գցում, մերթ հառաչում...

— Փող տուր, այդ պէտք է ինձ իմ փրկութեան հա-  
 մար: Գրգօն զգաց որ իր գլխի վրայ սոսկալի ամպեր

են կուտակուամ:

— Փող տուր թէ չէ...

Ու անծանօթը բարցրացրեց ցնցոտիները, լամպի լուսի տակ պսպղաց մի փոքրիկ դաշոյն:

— Փող տուր ասում եմ, կրկին գոռաց անծանօթը, և դաշոյնը դրեց նրա կրծքին:

Գրգռն ձեռքը տարաւ գրպանը, դողդոջուն ձեռքովհանեց պարոնի տուած հին թղթադրամը և մեկնեց նրան. անծանօթը վերցրեց վերջին դրամը նայեց, նայեց յանկարծ գոռաց Գրգռի վրա. փողը տար, այս երեք ուրբիին ինձ չի բարականացնի, փող հանիր:

Փող, տուր... էլ չունեմ Աստուած վկա չունեմ: — Չէ դեռ էլի ունես հանիր իսկոյն. Աչքերը արիւնո՞վ լցած գոչեց անծանօթը և դաշոյնը սխմեց նրա կրծքում:

— Վախ... բալէքս...

Անծանօթը ըռպէապէս խոխողեց Գրգռի կուրծքը, վայրենի գաղանի նման քրքրեց նրա ցնցոտիները, շուտ ու մոտ տւեց արիւնոտուած լաթերը պրպրտեց ամեն կողմ, բայց իզուր, ոչինչ չկար բացի հնամաշ երեքանոցից. Արիւնոտ գոհը ընկած յատակի վրա թաւալում էր իր արեան մէջ ու ստեպ -- ստեպ թոյլ դողդոջուն ձայնով արտասանում, Բալէքս... Բալէքս Եղօ՛, շուշան՛, Գասպար՛, մարօ՛, եղսօ՛...:

Նրա ձայնը կերկերաց, արիւնը բոլորովին քամւել էր...

Անծանօթը նայեց նրան, նայեց ու սոսկաց. նայեց հնամաշ թղթադրամին, մի սոսկալի ճիչ արձակեց, ապա վայրադօրէն դաշոյնը հանեց իր գոհի կրծքից. նոյն ըռպէին սենեակը լցւեց ոստիկաններով:

«Վշտահար սրտեր, այրւեցէք միատեղ» եղաւ անծանօթի վերջին խօսքը. և ձեռքերումը քանի ուժ կար դաշոյնը մխեց իր կրծքում. ձայները լռեցին...

Ու դրսում կատաղի լացող-ոռնացող քամին շարու-  
նակում էր անդուլ հեծեծալ...

Միսակ Յովնաննիսեան

Օշական

Ա.Ղ.Բ.Ի.Ի.Բ.

Վճիտ ջուրը պաղ աղբիւրի,  
Դուրս է բղխում ակունքից  
Կաթիլ-կաթիլ կախում ժայռի  
Սուր ու ծակ-ծակ ծերպերի:


Արեգակի վառ շողի տակ  
Նոքա փայլում են վառում,  
Յակինթի պէս ջինջ ու յստակ  
Միշտ էլ օդում առկայծում:

Վեր բարձրանում, նորից թափում,  
Նորից փայլում ու կորչում,  
Կուրծքը հպարտ ժայռին խփում  
Ու անդադար մարտնչում:

Դուրս թռչելով ջուրը յուզւած,  
Այդ կաշկանդող ակունքից  
Փախչում է նա յոգնած, բեզբած,  
Դէպի երկինք թաւշալից...

Հմայեակ Նազարեան

Երևան.



Արեւիկայի քաղաքի Կոմիտասի անուան հիշատակը  
 Կոմիտասի հիշատակը...

Միայն Երևանում

Թարգման

\*  
 \* \*

Թող աշխարհում ես չտեսնեմ  
 Հիւանդ հոգով մի մարդի  
 Եւ սիրահար բեկւած սրտեր,  
 Չլան, չողբան տխրալի...

Ու չտեսնեմ բացւող վարդեր  
 Իսկոյն կեթ՝ թառամող  
 — Ախ, չտեսնեմ ծաղիկ յոյսեր  
 Անհետևանք փշրւող...

Միայն տեսնեմ երգեր ու սէր  
 Սէր անթառամ մինչ յաւէտ,  
 Կեանքը քաղցր — սիրու ընկեր  
 Երգն էլ կրճփին առյաւէտ...

Ամենուրէք ուրախ տեսնեմ,  
 Երբէք յոյսը չխորտակի  
 Թող աշխարհում ես չտեսնեմ  
 Հիւանդ հոգով մի մարդի...

Օր. ՅԱՍԻԿ

Բազու



## ԱՅՆՊԷՍ Զ՞Է, ԱՍ՝Ա...

մութ երեկոյաններին, երբ, մարդաշատ քա-  
ղաքի աղմկոտ ու եւոզ կեանքը կամաց առ կա-  
մաց հանգիստ առնում խաւարի գրկում, երբ մութ  
գիշերն ու նոր սկսւող ցերեկը՝ որպէս երկու  
սիրահար երկար տոգորումներից յետոյ գալիս,  
հանտիպում են իրար ու երկար ժամանակ համր  
ու լուռ մնում քարացած՝ երբ խոր խաւարն իր  
գիրկն է առնում ամբողջ տիեզերքն ու բնու-  
թիւն, մենաւոր ու ռենիններից բացի ոչ-ոք չի  
լինում արթուն, ահա այդ պահին դու իմ անգին  
փէրի—կախարդ հմայքով ու անասելի դժւարու-  
թեամբ ծածկւած սպիտակ քողով, որպէս երկ-  
նային հրեշտակ, գալիս ես ինձ մօտ, ինձ այցե-  
լութեան նքո շարմաղ մատներով հիւսած երգը  
երգում.

«Ես փէրին եմ գիշերների

«Անտես թագնւած ամենքից...

«Վարեկցում եմ թշւառների

«Բիւր ցաւերին սրտակից...

«Դիցուհին եմ տիեզերքի

«Ողջ բնութիւն կախարդոպ

«Եկել եմ քեզ այսօր այցի

«Լինեմ ցաւիդ կարեկցող...

Իմ անգին՝

Սև գիշերներին դու թշ առննրի մօտես գըն-  
ում նրանց թաց աչքերի արտասուքը սրբելու,

նրանց վիշտ ու ցաւը դարձանելու...

Այսօր էլ եկել ես և ինձ մօտ՝ ինձ այցելութեան.  
բայց իմ լացը անարցունք է, իմ վիշտն ու ցաւը  
անտրտունջ, իմ չարօտը անհանգչելի...

Իմ անյագ ս. ենչն է տիրանալ Քեզ, Քո կախարդը լինել, ապրել ընդմիշտ Քեզ հետ...

Իմ փերի.

Դու թագուհին ես տիեզերքի ողջ բնութիւն  
կախարդող...

Ու ես կախարդւած եմ քո հմայքով և բարոյութեամբ...

Ասա՛, կգաս ինձ հետ ապրելու, որ այնքան  
վարդագոյն յոյսերով եմ սպասում քո գալստեանը:

Ասա՛...

Միւս անգամ ինձ այցելութեան եկած ժամանակ  
ընդմիշտ կմնաս ինձ մօտ այնպէս չէ.  
և նորից նոր երգեր կհիւսես ինձ համար...

Անկեղծ սիրոյ, երջանկութեան և բախտաւորութեան  
նոր-նոր երգեր...

Դու կմնաս ինձ մօտ ընդմիշտ, յաւիտեան, և  
մենք զոյգով կապրենք երջանիկ...

Այնպէս չէ... ասա՛...

Դ. ՍԱՐԳՍԵԱՆ

Բագու



ՔԿՆՈՐԱԸ

Խաղաղ է օդը, գիշերւայ ժամին  
Հանդիստ է ծով, կոկիկ ու փայլուն,  
Եւ աստղեր շողուն, և՛ պայծառ լուսին  
Փայտում են երկնից, հսկում են արթուն:

Մի փոքրիկ մակոյկ լուռ ծովի վրայ  
Կողում է մենակ ուժերը լարած,  
Նորա մէջ մի ծեր և մի երեխայ  
Տուն են շտապում յոգնած, վաստակած:

Ողջ ամռան օրը յոգնած, վաստակած,  
Որսացին ձկների քրտնած դէմքով  
Եւ հարուստ պաշար լցնելով նաւակ,  
Դէպ տուն են դիմում ուրախ, գոհ սրտով:

«Շո՞ւտ կհասնենք տուն» — հանդիստ չէր տալիս  
Անհամբեր որդին ծերունի հօրը.

Եւ ամեն անգամ դէպ ասի նայելիս,  
Յիշում էր փոքրիկ քրոջն, ու մօրը:

— «Համբերիր որդիս, միայն երկու ժամ  
Եւ մենք անվտանգ կհասնենք ասիին.  
Խեղճ մայրդ ու քոյրդ գուցէ տասն անգամ  
Փայտեր են դարսել հանգած կրակին:

— «Գիտեմ քաղցած ես. համբերիր հոգիս,  
Շուտով տաք ապուր մենք կվայելինք.  
Եւ միւս առաւօտ ծէզը բացելիս  
Նորից որսալու մենք պիտ շտապենք:

Փոքրիկ ձեռներով դեկը պինտ բռնած,  
Ծերուկ ձկնորսին նայում էր որդին.  
Հօր անհոգ դէմքը փարատեց կասկած,  
Թնդում էր սիրտը որ մօտ են ասիին:

Չէր անցել կէս ժամ և ահա աստղեր  
 Հանգել սկսան իրար յետևից  
 Խաւարեց լուսին բարձրացան բուքիր  
 Խաղաղ երկինքը դժոխքի փոխւեց:

Փչեց սառ թամին՝ բարձրացաւ մրրիկ  
 Վրդովուեց ծովը մինչև խոր յատակ,  
 Գոռացին ամպեր, փայլեց հուրկայծակ  
 Գոռիւն գոչիւնով վխտացին ալիք:


Ահեղ ուկեանը ճչաց, փոնչաց,  
 Սարսափ ու սոսկում տիրեց բնութեան  
 Բուք, անձրև, կայծակ, իրարու խառնւած  
 Դողացրին աշխարհ տերևի նման:

Եւ երբ առաւօտ խաղաղւեց ծովը,  
 Արև ու մարդիկ դարդել սկսան,  
 Չկնորսի քանդւած խրճիթի քովը  
 Երկու մարդկային դիակներ գտան:

Իսկ մի քիչ հեռու՝ հէնց ծովի ափին  
 Երևում էր մի տախտակի կտոր,  
 Կիսով չափ թաղւած աւազի միջին  
 Անտէր ողբում էր մակոյկի բեկոր...

Երևանի Տեր Գրիգորեան

Թիֆլիս




ԱՇՆԱՆ ԵՐԳԵՐԻՑ

Ի՞նչով ներշնչւեմ. բնութիւն մեռար  
Դսւ դաժան ձմեռ, շուտով մօտեցար.  
Եւ ահա աշնան վերջին օրերին,  
Տերեներն դեղնած ընկնում են գետին:

Սարեր ու ձորեր, դաշտեր անտառներ,  
Սգաւորի պէս տխուր դէմք առած  
Օդը դատարկւեց, փախան թռչուններ,  
Զի լսւում նրանց երգը դիւթական:

Ցուրտ քամիներն աշխարհ պատեցին  
Էլ չկայ անուշ գեփիւոր գարնան,  
Երկինքը ծածկւեց ամպերով մթին.  
Ախ, կեանքը մեռաւ դարձաւ գերեզման:

Օր. Լուսիկ Վիրաբեւան



1002  
6652

## ԵՐՁԱՆԿՈՒԹԵԱՆ ԺԱՄԵՐ

Խաւարը փռել էր իր սգաւոր փէշերը. մեռելեան լռութիւնը տիրում էր դուրսը: Չայն չկայ:

Միայն հեռւից սարի յետիւց արշաւում էր ամբրոսախուռն զեփիւռը ու շփում երեսիս իր խնկելի բոյրը: Մենակ եմ. սուզում եմ անվերջ թախծանքի դառն ու ակեղոծ ակիքների մէջ:

Իսկ զեփիւռը իւր բիւրաւից թևերով շփում է երեսիս՝ ու կորչում հեռու հեռու...:

Գիշերային խաւարի մէջ սպասում եմ մէկին, որին անվերջ փափակում եմ և սիրում անյազ սիրով. և ահա նա դուրս է գալիս թախծանքի ակիքների միջից, և մօտենում յուշիկ քայլերով, կանչող սիրալին ջպիտն երեսին:

Սիրոս թնդաց, այլայլեցի. ուզում էի փարւել նրա կուսական անարատ լանջին, բայց նա չքացաւ մթութեան խաւարի մէջ: Մի սոսկալի սառսուռ զգացի ու կարծես մէկը ականջիս շրջնջաց «խաբւեցիր» նայեցի շուրջս, ոչ ոք չկար ոչ ոք: Ու ես դարձեալ անձնատուր եղայ նոյն մտորող ցնորքներին: Եւ ահա վերստին տեսնում եմ նրան իմ մօտ, աւելի փառահեղ, խօտում է ինձ հետ...

Ու ամեն օր զգում եմ սրտիս թովում է մի բան. դա իմ սէրն է որ ծնունդ է առնում թախծանքի կաշկանդումներից .

Բայց դա երազ էր, այն էլ խելացնոր Էրազ  
որ տալիս էր ինձ երջանկութեան թևեր. թևեր,  
որ համակում է իմ ողջ էյութիւնը ու տանում  
ինձ վշտերի ու տանջանքների բովից...

Միթէ այսպէս շուտ է փակում երջանկու-  
թեան ճանապարհը...

Այո, երջանկութեան հասնել դժուար է, ու  
ու միշտ էլ դժբախտութիւնը յաղթանակում է:

Օ, այն ժամանակ քար կպատուեմ երկինք  
կճաթեմ նրան հասնել, մէկ անգամ, գոնէ նորից  
մի անգամ փարւել նրա անարատ լանջին ննջե-  
լու յաւէտ նրա կրծքին, մրմնջալու կեանքի  
երջանկութեան սիրոյ երգը՝ սիրում եմ քեզ սի-  
րում եմ քեզ...

... Եւ այնպէս ամբողջապէս Աղաչան

... Եւ այնպէս ամբողջապէս Աղաչան

Վերջալոյս էր մի, լուռ ու գեղեցիկ  
Գիւթող ու գերող անհուն հմայքով,  
Եւ ես քայլում եմ մենակ ու մնջիկ,  
Գետակի դալար կարկաչոտ ափով:

Նայում եմ նրա ջրին մունջ ու լուռ,  
Հոսող կարկաչով մեղմիկ, լալագին,  
Որի ալիքներ պղտոր ու ախուր  
Յորձանք են տալիս, յորձանք ահագին...

Յորձանք է տալիս, գետակը հոսում  
Ափի կարկաչոտ ծաղկանց փարւելով,  
Եւ հին իր ուրախ քչքչոցի տեղ  
Տխուր մեղեդի մի երգ սուլելով...


Եւ ես լսում եմ. ահա այն հեռւից  
Սգւոր գետակի միւս դալար ափին,  
Մէկը կամացո՞ւկ, տխուր, տրամալից՝  
Հնկերակցում է գետակի սգին...

Ցաւատանջ գետակի կանաչոտ ափին  
Ուռին գլխակոր, տխուր ու տրտում  
Տնքում է անվերջ, հեծում լալագին,  
Եւ անցած ուրախ օրերը յիշում...

Վշտոտ ուռենին գլուխը ծռած,  
Տօղ ու արցունք է նա թափում վհատ,  
Սգւոր ուռենին իր ցաւը թողած  
Գետակի վիշտն է լալիս յուսահատ...

Հայկ Արզումանյան

Բազուկ



Մրրկեաժ ծովում առաջ եմ գնում,  
 Պատում եմ թափով ալիքները գոռ.  
 Առաջ եմ լողում անյատակ ծովում,  
 Բայց չսխտեմ թէ դէպ ուր եմ գնում:  
 Հեռու ահաւոր մշուշի միջին,  
 Ես լոյս եմ տեսնում ու նրան ձգտում,  
 Կեանքի փարոսն է այնտեղ փայտում,  
 Այնտեղ, հեռաւոր թուխպերի միջում:  
 Արդեօք կհասնե՞մ ես ասի երջանիկ  
 Արդեօք կփարե՞մ այն լոյսը քաղցրիկ,  
 Թէ այս ծովում կուլ գնամ ջրին  
 Առանց աղօթքի առանց գերեզման...  
 ԼԵԻՈՆ

\* \* \*  
 Ամենայն գիշեր սրտիս խորանում,  
 Պահաժ է ընդմիջտ պատկերդ գողտրիկ,  
 Ու ես ծնկաչոք քեզ եմ աղօթում  
 Աղօթում եմ քեզ իմ սիրած աղջիկ:  
 Սիրի՛ր ինձ սիրի՛ր գթա՛ ինձ խնդրեմ,  
 Որ ես քո առաջ յուլէտ անզօր եմ.  
 Թոյլ տուր ինձ ապրել, ապրել քո գրկում  
 Գոնէ իմ տենչած ոսկի երազում:  
 ԱՂԱԶԱՆ

Թիֆլիզ

Նրդ եմ հանել,

Աշուղ դառել

Դա վառ երգն է իմ սրտի,

Նրդ եմ հանել,

բլբլիւղ դառել

Նրդում եմ մի մեղեդի:

Հոգուս կարօտ,

Սրտիս եարօտ

Բուժիչ երգն իմ սրտի...

Հասի Աղաջանեան

Թիֆլիս

Քնած էի խորը քնով,

Երբ գիշերով դու եկար

Առսիկ-փոսիկ մօտենալով

Սիրտս հանիր ու տարար...

Տարար հեռու, շատ շատ հեռու,

Ես մնացի վիրաւոր,

Չեռս ծոցիս, խեղճ, անկարող,

Մնացել եմ սգաւոր....

Այժմ կուլամ կ'հեկեկամ

Սիրտս կուզեմ, եար կուզեմ,

Միշտ էլ էնպէս ես կողբամ

Խո՛ր, խո՛ր վէրքիս ճար կուզեմ...

Հմայեակ Նուզարեան



\*\*\*

Նոր երազներ, նոր անուրջներ ոսկեցող  
 Պարուրում են հոգիս ցաւոտ անհառաչ,  
 Սիրտս խորթ է, հոգիս օտար ու անխօս,  
 Դիցուհիներ ու փէրիներ ձեր առաջ:

Խոր խոցոտւած հոգիս լալիս է կամաց  
 Մերթ թախծում է մերթ ոչնչում ամեն ինչ...  
 Մերթ էլ սիրտս դողդողում է մեղմայոյզ  
 Եթերներէն ցոլող լոյսից պարզ ու ջինջ...

Ու մենակ եմ. մերժւած հոգիս խենթալէն  
 Դողդողում է երազ Փօնիդ հէնց առաջ,  
 Սիրտս յուզւած, խենթոտ անյոյս երազէն,  
 Թռթռում է... կամաց հանգչում անհառաչ:

Բուլաղգաղէ

Երևան

\*

\*\*\*

Մէկն ինձ տուեց իր սրտի խորքից,  
 Թարմ շուղերով մի ծաղիկ-փնջիկ  
 Կոկոն ծաղիկը իս կրծքին սեղմած,  
 Զերմ լացեցի, լռիկ ու մնջիկ...

Արցունքս ցայտեց իմ սրտիս խորքից,  
 Կրծքիս ծաղիկը արցունքով ցողեց  
 Արցունքով ցողւած թարմ ծաղիկը  
 Իմ կրծքի վրայ շորցան, թառամեց...

Միսակ Յովհաննիսեան

Երևան,

## ԽԱՆԴԸ.

— Սօֆիա, չգնանք պարահանդէս, ասու՛մ էր  
ամուսինը, հայելու առաջ հոտաւէտ իւղերով  
օժւող կնոջը, — կուզե՞ս թաւրոն գնանք. այսօր  
մի շատ հետաքրքիր դրամա են ներկայացնելու:

— Իայց ինչո՞ւ պարահանդէս չգնանք...

— Զգտե՛մ ինչո՞ւ, մի վատ նախազգացում ճշն-  
շում է սիրտս...

— Ա՛, հասկանում եմ, ծիծաղեց կինը. դու  
կարծում ես թէ ես ուրիշի հետ կպարեմ...,

— Օ՛, Սօֆիա՛, այդ մի ասիլ, դու գիտես, որ  
ես չեմ համբերում, ուրիշի՛ իմ կնոջ հետ արած  
խաղերին, ես շատ շուտ եմ ինձ կորցնում: Ի՞նչ  
արած, դա էլ մի հիւանդութիւն է:

— Այո՛, դու սաստիկ ջղային ես:

Երկար ու բարակ խօսակցութիւններից յետոյ,  
կինը ամուսնուն մի կրքոտ համբոյր բախշելով,  
ուղևորւեցին պարահանդէս:

Դահլիճը, ուր նրանք գտնւում էին, լիքն էր  
երկսեռ բազմութեամբ: պարում էին հոլանի  
մարմիններ, զոյգ-զոյգ, ի մի փարւած...

Դահլիճում թաղցրահնչիւն ելևէջները աւելի  
եռանդ էր տալիս պարին, ու զոյգերի պտոյտ-  
ները դառնում էին աւելի արագ և կրքոտ:

Ամուսինները նստեցին, և սկսեցին դիտել:

Նրանց ուշադրութիւնը գրաւեց իսկոյն, մի

բարձրահասակ պարոն, ու մօտենում էր իրենց  
և խորհրդաւոր դուրս տալիս:

Սօֆիան նայեց նրան, և ինչոր ներքին յոյգեր  
պաշարեցին նրա ըմբոստ հոգին...

Երիտասարդ Դօն-ժուանն էր, որին երկար տա-  
րիներ սիրել էր, և պաշտել գաղտագողի...

Այժմ պիտի նորից, գէթ մի րոպէ յիշէր ան-  
ցեալը, մի որևէ կերպ ցոյց տալով ինքը ևս յի-  
շում է անցեալը, ու մի հայացք նետեց նրա երե-  
սին:

— Ի՞նչու, ինչ պատճառով ամուսինը պիտի  
բռնութիւն գործ դնի կնոջ վրայ — մտածում էր  
Սօֆիան. ախր չէ՞ որ կինն էլ ծնւել է իր հոգե-  
կան յատուկ զգացումներով և իրաւունքներով ..

Ու նա մի ցնցում գործեց.

Ամուսինը չնկատեց...

Խեղճ մարդ.., նա մի րոպէ կնոջ անհաւա-  
տարմութեան վրա չէր կասկածում, թէև գիտէր  
որ նէ սիրում է Դօն-ժուանին: Ամուսնու սիրտը  
սկսեց ամուր տրոփել, երբ Դօն-ժուանին նկա-  
տեց իրենց առաջ պտտուելիս...

Մի րոպէ նրա մտքով անցաւ, որ կինը կմերժի  
այդ պարոնին, և ցոյց կտա, որ լուսաւորւած  
և զարգացած կանանց մէջ էլ կայ սուրբ բարո-  
յականութիւնը...

Օ՛, այն ժամանակ նա նորքա պիտին սիրէր  
իր Սօֆիային...

Բայց... այդ ի՞նչ է... Մի՞թէ նա է... այն նա...  
 Սօֆիան... Ահա ձեռք տւեց... Ո՞հ, պարոնը  
 գրկեց նրան... պտտում են... Ի՞նչ եղան...  
 կորան... Բայց ահա եկան... ինչ արագ են պա-  
 րում... Բայց ահա կորան... անպատճառ պար-  
 տէզ իջան...

Աստիճանաբար ոաստկացող կասկածի տակ նա  
 նետուեց դէպի պարտէզի դուռը, սւ խայթւածի  
 նման կանգ առաւ. առջին էր Սօֆիան ու պա-  
 րոնը գրկախառ...

Աւելի դառն հարւած չէր կարող լինել խեղճի  
 համար...

Նրա մարմինը կճկւեց, փոքրացաւ. կարծես  
 աներևոյթանալու պատրաստուեց, չտեսնելու ա-  
 մուսնական պատւի ջախջախումը...

Յետոյ ուժեղ կերպով ցնցւեց, ու մատներով  
 ջղաձգաբար սեղմեց ատրճանակի կոթը:

Ու ահաբեկիչ ձայնով գոռաց հրանօթը՝ ար-  
 դար վրէժառութեան բոց արձակելով... ու դրայ  
 հետ անմաքուր ու մեղաւոր ճիչով մի կանացի  
 մարմին գլորւեց աստիճաններից...

Հաւատարիմ տիրոջ նպատակին՝ գնտակը չէր  
 վրիպել իր նենգ ախոյանի մարմինն անցնելուց...

Շշմած անասելի դէսլքից, դուրս թափւող հան-  
 դիսականների մէջ մի բոսլէ կանգնած էր նա  
 անսասան, աչքերը կնոջ անշուշ դիակին յառած:

Ապա նա երերաց, բազուկները թուլացան,  
 ու ատրճանակն ընկաւ գետին, անզօր հառաչ-  
 մամբ բողոքելով նախախնամութեան, այդօրինակ  
 տնօրինութեան դէմ:

Աներևակայելի յուսախաբութիւնից ծալեցին  
 թշուառի ոտները, և նրա դողդողացող շրթունք-  
 ները անգիտակցաբար շնչացին, «Սօֆիա» ու  
 իրան գրկող մի գոյգ բազուկների մէջ, թուլա-  
 ցած ընկաւ գետին...

Խաչատուր Աղամորդի  
 Հին Նախիջևան



## ԴՈՒ, ԻՄ ՍԻՐԵԼԻՍ...

(Նւէր Հ.ին)

Դու իմ սիրելիս աղբիւրն ես  
 սիրոյ և ճշմարտութեան  
 Քո մատաղ սրտում բարիքն են անթիւ  
 ու սէրն անսահման:

Քեզ մօտ խաւարը նսեմանում է  
 իսպառ չքանում,  
 Լոյսն իր առատ և ոսկիանման  
 շողերն է սպառում:

Քո վառ աչքերից ցայտում են վրաս  
 լուսեղէն կայծեր,  
 Լուսաւորում են դէմքս դալկահար  
 Տալիս նոր պատկեր:

Քեզ մօտ սիրելիս ես ինձ երջանիկ  
 ուրախ եմ զգում  
 Քո շրթունքներից սիրոյ քաղցրութեան  
 երգն եմ լսում:

Ե. ԺԱՄՀԱՐԵԱՆ

Երևան



նուժ սովորական խօսակցութեան ժամանակ և ոչ թէ ֆիլիսոփայական մտքերով զբաղուելիս:

Կարողում ենք հետևեալ էսքիզը — „Միտոն“ որի հեղինակը՝ պ. Յակ. Տէրունին անշուշտ ծանօթ է հայ գիւղացու նիստ ու կացին:

Նա կարողացել է „Միտո“-ի մէջ տալ գիւղական դպրոցի աշակերտի և ուսմիկ գիւղացու տիպերը, իհարկէ սեղմած շրջանակի մէջ:

Պ. Յակ. Տէրունին իր այս երկուս ու կէս երեսանոց էսքիզի մէջ աւելի շատ բան է տալիս ընթերցողին, քանց թէ պ. Սարգօ-ն իր „Զգացումներ“-ով, և պ. Ս. Շահրիանը իր „Հեքեաթ“-ով, որտեղ հեղինակը ազդած է խոշոր հեղինակներից, և բռնած է ժամանակի գրական բառացաւով, ինչէս են՝ վիշտ, անուրջ, հիւլէ, երազ և այլն:

Հետևում եմ միւսին՝ դա Լալայի „Ծերունի Բարսեղն“ է, մի շատ յաջող գրւածք, որի հեղինակը փայլուն ապագայ է խոստանում:

Յաջող է պ. Վարդան Մամիկոնեանի „Կգաս... չէ“ փոքրիկ արձակ բանաստեղծութիւնը. լեզուն հարուստ է և ճոխ:

Պ. Անդրի-ի „Ես քեզ կհասնեմ“ թոյլ է և գրւած ոչ հայերէն:

Յովսէփ Այլամազեանի „Թշուառներ“ ընդհանուր վերնագիր կրող էսքիզները 1) „Հալալ աշխատանք“ 2) „Երազ“ և 3) „Ո՞ւժ է նա կանչում“ միանգամայն դովիլի է, սակայն պէտք է խոյս տալ արդէն մի անգամ տպւած նիւթը երկրորդ անգամ մտցնել ներկայումս հրատարակի վրայ գտնւած արմանախների կամ ժողովածուների առանց այն էլ սուղ էջերում:

Պ. Արամ Ալշուշեանի „Նազէն“ թէև մօտ է իրականութեան, սակայն երկուս է, որ հեղինակը ծանօթ չէ



հայ գիւղացու նիստ ու կացին, հետեապէս այնքան էլ  
յաջող չէ:

Բաւական չէ խորը թափանցել ընտրած նիւթի խորքը  
այլ և պէտքէ ծանօթ լինել այն միջավայրի հետ, որ-  
տեղ տեղի է ունենում գործողութիւնը:

„Թատրոնի նապաստակները“ որը պատկանում է  
պ. Անգրի-ի գրչին՝ բոլորովին գուր է դետեղւած „Լու-  
սանէմին“ - ում:

Բանաստեղծական բաժինը աւելի յաջող է: Յաջող  
են գլխաւորապէս Հրանդ Համբարի „Սիրտս...“, Մի-  
սակ Պետրոսեանի „Աղօթք“, Գ. Վարդանեանի երեք  
աստղ կրող ոտանաւորը և, Մկրտիչ Խաչումեանի  
„սրտիս ալբօմից“ բանաստեղծութիւնը:

Անշուշտ, առանց անյաջողի յաջող չի լինի, ուստի  
մենք էլ հաւատացած լինելով, որ „Լուսադէմինը“ իր  
միջից ապագայում կգտէ վատ ու թոյլ ուժերին առաջ  
կղնայ, չմոռանալով հնար եղածին չափ աշխատել ա-  
ղատելու պատանիներին ժամանակի տիրող գրական  
ինվալիտների ոտնաձգութիւններից:

Սպասենք, և յուսանք...

Դ. Մեհիկ

Բագու:



## Պատ-արկի

ԹԻՖԼԻՍ. Ա. Ունանեանին. — Չտպեցին. կարող էք յետ ստանալ:

„ Արմէն Անանեան. — Յայտնեցէք Ձեր հասցէն. պօէման դեռ չէ ստացւած:

„ սր. Էմիլիա Նազարեանին — Մնաց հետեւալ անգամին:

„ Սւազ Գրիգորեանին — Ձեր նիւթը այս համարի համար անյարմար եղաւ տպագրել, երկար լինելու պատճառով, մնաց հետեւալ անգամին:

„ Վարդան Լալայանին — Ուղարկեցէք հրատարակելիք գրքերը: Սպասում ենք:

ԲԱԳՈՒ Օր. Յաս-իկ-ին — Յայտնեցէք Ձեր իսկական հասցէն, և անուն ազգանունը

Չարունակում է բաժանորդագրութիւն 1914 թ.

**Հորիզոն** Գրական, հասարակական և քաղաքակ. օրաթերթի: Տարեկան 8ր. կէս տարին 4 ր. 50 կ. հասցէն՝ Тифлисъ ред. „Оризонъ“.

**Մշակ** Գրակ. հասակակալ. և քաղաքակ. օրաթերթ Տարեկան 10ր. հասցէն Тифлисъ ред. „Мшак“

**Նոր-Մամուլ** Գրական հասարակակ. և քաղ. շաբաթաթերթ. տարեկան 4 ր. կէս տարին 2ռ. 25կոպ. Эриванъ ред. „Нор-Мамул“

**Նոր ուղի** Գրական արձանախ. լոյս է տեսնում ամիսը մէկ անգամ. տարեկան 1ր. 25 կոպէկ: հասցէն՝ Александрополь ред. „Нор-ули“ тип. Саянца

**Արև** Գրական, հասարակական և քաղաքական օրաթերթի: Տարեկան 7ր. կէս տարին 4 ր. հասցէն. Баку ред. „Арев“ Торговая №7

**Նոր Հասակ** Գրական գիտական և գեղարուեստական ամսագիր. տարեկան 7 րուր: հասցէն՝ Тифлисъ ред. „Нор Осчкъ“

**Ծի** Գրական ժողովածուներ. լոյս են տեսնում երկու ամիսը մէկ անգամ. հասցէն՝ Баку Биржевая 96 Г. Арзуманяну Լուսաղէմի Նամար:

Հոյս են տեսել Միսակ Յովհաննիսեանի

Վշտի ցօղեր . . . . 7 կուպ.

Մութուն ջաներ . . . . 10 կուպ.

Ճատագայթ I (ժողովածու) 10 կուպ.

Ճնտագայթ II . . . . 10 կուպ.

Գինն է 10 կուպէկ

Ճանկացողները կարող են դիմել մեզ հե-  
տևեալ հասցէով՝ Эривань Мисаку Оганесянцу



